Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.71
Ч-52

891.713
Ն-47

№ 1198

№ 1

Վ. Ի. ՆԵՄԻՐՈՎԻՉ-
ԴԱՆՉԵՆԿՈՅ

ԳՐԱՇԱՐՈՒՀԻ

ԳԻՆՆ Է 2 ԿՈՊ.

№1198
30 OCT 2006
19 NOV 2010

ԳՐԱՇԱՐՈՒՀԻ

891.71
Գ-52
սար

ԶՐՈՅՑ

1002/5399

Վ. Ի. ՆԵՄԻՐՈՎԻՉ ԴԱՆՉԵՆԿՈՅԻ

Հայոց Գրադարան
Հ. Պոլսեցի Թանգարան
7/XI—1922
Հակոբ Հ. Մելիքյան
Մայաստանի Ազգ.

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՏՊԱՐԱՆ Ս. ՊԵՏԵՐԲ. ԸՆԿ. ՏՊԱԳՐ. ՆԻ ՀՐԱՏԱՐ. ԳՈՐԾԻ „ՏՐՈՒԴ“
1903

11.07.2013
12316

Дозволено Цензурою. С. Петербургъ, 16 Января 1903 года

С.-ПЕТЕРБУРГЪ.
Типографія Спб. Т-ва Печ. и Изд. дѣла „Трудъ“. Фонтанка, 86.
1903.

ԳՐԱՇԱՐՈՒՀԻ

Թաց, կանաչացած պատեր են։

Սարդոստայնի խիտ ցանցերը ծածկել են ցած ու ծուռ առաստաղի բոլոր անկիւնները։ Կեղտոտ, պատառոտուն վարագոյներով պատուհանի մօտ դրուած են չջրուած ու փոշու մէջ խրուած կանաչների երկու թէ երեք անօթներ։ Մի անկիւնում՝ փոքրիկ սեղանն ամբողջովին ծածկուած է գրքերով։ Լրագրի մի քանի ցիր ու ցան համարներ թափուած են պատուհանում։ Ցատակի վերայ անկարգ դրութեան մէջ փռուած են մի շարք սրբագրութիւններ և մի քանի այլ թղթեր՝ գրուած մանր կանացի ձեռագրով։

Ամենուրեք աղքատ է և չքաւոր։

Երևում էր, որ վաղուց է այստեղ ամեն բան զրկուել իւր տիրուհու խնամքից։ Թանձր փոշին ծածկել է մի ուրիշ սեղանի վերայ ընկած բայ երեսները։ Կիսակարուած հագուստն էլ՝ դեռ ասեղը մէջը մնացել է տեղն ու տեղը։ Մի բաժակ՝ կիսով չափ խմած թէյով, մէջն էլ երկու ճանճ, ճայթուած պնակի վերայ՝ շողշողում էր արեգակի թափանցիկ ճառագայթների տակ։

Պատի մօտ դրուած է նեղ, փայտէ մահճակալ։ Մի երիտասարդ, բայց տանջուած և ուժասպառ դարձած տղջիկ պառկած է նորա վերայ։ Թուխ ու խիտ մազերն սփռուած էին սպիտակ բարձի երեսով։ Նրանց տակից տեսրամած նայում

էին մութ, կապույտ աչերը, արտայայտելով ծանրագին թախիծ։ Երբեմն նորա այտերը վառուում էին տենդոտ կարմրութեամբ և այդ միջոցին աչքերը շողշողում էին կրակավառ ցոլքերով։ Մթագոյն երակները ձգուում էին փոքրիկ, բայց վայելուչ ճակատի վերայ։ Նազելի վեզը՝ մինչև ոչ բարձր և ուժից զրկուած կուրծքը՝ շնորհում էր աղջկան ապշեցնող գեղեցկութիւն։

Երբեմն նա հազում էր և նորա երեսը լցուում էր արիւնով, իսկ սպրտնած ձեռները սեղմում էին կուրծքը, կարծես կամենալով անտանելի ցաւը բռնել։ Վարագոյրի տակից ներս էին թափուել լոյսի առատ շողերը և ցրուել հիւանդի գըլխին։ Նա ագահութեամբ նայում է պատուհանին։ Կարծես նորա համար թանկ է ձռաբուած փոշու իւրաքանչիւր հատիկը, կարծես նորան շատ սիրելի էին թաց պատի, պատուհանի տախտակի և բաժակի վերայ ընկած լոյսի ցոլքերը։

Նա հայեացքը յաճախ նետում էր բաց գրքի երեսներին, գեռ չվերջացրած ձեռագրին և այդ րոպէներում նորա մէջ ակամայից զարթնում էր մի խորին տանջանք։

Պատի ժամացոյցը վաղուց է կանգ առել։ Փշրուած ապակիների արանքով փոշին նստել է նորա վերայ և սարդն արդէն սկսել է իւր ոստայնը սարքել։

Հեռուից լսուեց թեթև քայլերի ձայն, ապա մեղմ ձռռոցով բացուեց դուռը և սենեակ մտաւ մեծ զլխով, չսանրուած մազերով մի կին։

— Նաստիա, ա՛յ Նաստիա։

Հիւանդը երեսը դարձրեց դէպի դուռը։

— Տան տիրուհին եկել է, Աստուած է վկայ, ասում է ուզում եմ Նաստասիա Իւանովնային տեսնել։

— Թող ներս գայ։

— Ասաց, գնա հարցրու. ի՞նչպէս է զգում իրան։

— Այսինքն ի՞նչպէս։

— Դէ՛... այսինքն հիւանդութեան մասին։

— Ասա թող ներս գայ։

— Էլի ուզում է բնակարանի վարձ ստանալ։

— Փող չկայ դեռ։

— Զկա՞յ... Հ՞մմ... Դէ՛, ի՞նչ արած, ուրեմն երբ չկայ, նա էլ չի կարող ստանալ։ Ես այդպէս էլ կասեմ։

— Այդպէս էլ ասա նորան։

— Իսկ այսօր մի բան պիտի ուտե՞ս։

— Զէ՛, չեմ ուզում։

— Կե՛ր. ախր առողջութեանդ համար...

— Զէ՛... կուրծքս ցաւում է...

— Ըմմ... կուրծքդ...

Կինը հեռացաւ այդտեղից։

Անցաւ մի քանի րոպէ, նորից լսուեց քայլերի ձայն և մի թեթև աղմուկ։ Դուռը բացուեց, սենեակ մտաւ դեռ չպառաւած, երեսն անճոռնի կերպով կարմրացրած մի կին։ Նորա հագուստը կարուած էր վառ գոյնի մետաքսից։

— Է՛, Նաստասիա Իւանովնա, ի՞նչպէս էք, ի՞նչպէս է Աստուած օգնում ձեզ։

— Վատ, կուրծքս ճնշուում է։

— Ես ձեզ մօտ եկայ գործով։

— Ի՞նչ էք կամենում։

— Ես դարձեալ փողի մասին. խնդրեմ սենեակի վարձը տուէք, շատ հարկաւոր է։

— Փող չկայ, տպարանատէրը դեռ չի ուղարկել։ Նորան այսօր նամակ ուղարկեցի։

— Ա՜խ, Նաստասիա Իւանովնա, այդ քո «արդար աշխատանքովդ» դու քեզ սպանեցիր։ Բայց ի՞նչ գործանից։ Մի՞թէ ձեզ հէնց այդպիսի կեանք է հարկաւոր։ Ահա դուք հիւանդ էք և ոչ ոք էլ ձեզ չի հարցնիլ, ոչ ոք։ Ձեր աղքատութիւնն էլ ոչ մի կերպ չի ծածկուիլ...

— Բաւական է։

— Ի՞նչ, բաւական է... Բայց քեզ ի՞նչ վաճառական առաջարկեցի. ինչո՞վ էր վատ։ «Ամեն բան կանեմ, ասում էր, ծնողներիցս էլ կբաժանուեմ, որովհետև շատ մեծ սէր եմ

զգում»։ Ուրիշը լինէր՝ իմ արածը մեծ բարեգործութիւն կը համարէր, բայց դուք ի՞նչպէս... Է՛, Նաստասիա Իւանովնա, յիշո՞ւմ էք ի՞նչ ապարանջան էր գնել ձեզ համար. մէջ տեղն իսկական ադամանդ, տակն էլ փորագրած՝ ֆ նշան անհո՞ն ոչրոյ։ Այո, զլուխդ չվերցրեց հանգիստ ապրուստը։

— Ա՛խ, թողէ՛ք ինձ։

Աղջիկը ծանր հաւեց, արիւնը փայլեց շրթունքներին։

— Ի՞նչ թողէք։ Ձեզ համար շատ տանջուեցի և կարծեցի, որ շատ գոհ պիտի մնաք։ Դէ՛, գնացէք այժմ ձեր «արդար աշխատանքով» ու ձեր քսան ռուբլ ամսականով քարշ ընկէք։ Ա՛խ, ի՞նչպիսի յանցանքներ կան։ Զէ, սիրելի, ներկայումս այդպէս չի կարելի ապրել։ Ներկայումս մարդիկ բոլորն աւազակ են, սրիկայ են. ուրեմն բոլորից պէտք է պոկել, սա օրէնք է։

— Ես ձեզ փող կուղարկեմ։

— Դու ահա մի ամիս է, որ նոյնն ես ասում։ Դեռ ուղարկում ես...

— Կարելի՞ է մտնել. դրան ետևից լսուեց մանկական, զողզոջուն մի ձայն։

— Մտի՛ր. ո՞վ է այդ։

— Ես եմ, Պետեան, տպարանից։

— Տիրոջի՞ց։

— Այո։

— Ի՞նչ է, նամա՞կ է ուղարկել։

— Նամա՞կ, չէ՛, ի՞նչ նամակ։ Նամակ չկայ։

— Դէ՛, էլ ինչո՞ւ ես եկել։

— Տպարանատէրը հրամայել է ձեզ յայտնել, որ փողն այն ժամանակ կստանաք, երբ գործի կկենաք։ «Մեր պայմանն, ասում է, այդպէս է եղել։ Ամսականն, ասում է, չի կարելի տալ։ Ի՞նչպէս կլինի, ասում է, մի օր աշխատել, միւս օրը ոչ։ Այդ՝ ասում է, երես առնել է նշանակում, ասել է, այդպէս էլ ասա, թող գայ գործելու, ասել է...

— Ա՛խ, Աստուա՛ծ, այս ի՞նչպէս կլինի,

— Ասել է՝ այդպէս ասա. թող գայ գործելու, թէ չէ՝ ի՞նչպէս կարելի է մի օր...

— Դէ՛, բաւական է, լաւ։

— Այդպէս ասում է չի կարելի, այդ երես առնել է։

— Բաւական է, քեզ ասում են։

— Դէ՛, ես տպարանատէրից, այսինքն ինչպէս նա հրամայել է, ես պէտք է անպատճառ հաղորդեմ ձեզ։

— Գնա՛, ասա ինքս կգամ։

Երեխան դուրս գնաց։

— Այս էլ ձեզ տպարանատէրը, այս էլ ձեզ փող։ Էլ ի՞նչպէս կտաք դուք սենեակի վարձը։ Հ՞մմ... ո՞րտեղից կը ստանամ ես։ Միթէ այդպէ՞ս են անում ճշմարիտ աղջիկները։ Ա՛խ, ի՞նչպէս չէք ամաչում։ Զէ՞ որ ինքս էլ աղքատ կին եմ։

— Գոնէ մի ամիս էլ սպասեցէք, ես բոլորը կվճարեմ։ Աշխատելու կգնամ։

Ի՞նչ սպասել։ Դուք այդ տեսակ կեանքում երբէք առողջ չէք լինելու։ Բայց դուք, սիրելի՛, լսեցէք ինձ։ Ես ձեզ համար վատութիւն չեմ կ. մենում։ Դուք երբ թողնէք այդ մահիճը, սկսեցէք կամաց կամաց քաղցը վարուել այդ վաճառականի հետ։ Նա ձեզ միանգամայն ամեն բաւականութիւն կտայ։ Ոչ թէ միայն փող...

— Թողէք ինձ. չէ՞ որ ես ձեզ միշտ կանոնաւոր վճարել եմ։

— Այսօր կանոնաւոր, վաղը կանոնաւոր, բայց միւս օրն անկանոն, ահա թէ ի՞նչպէս։ Իսկ սենեակն ինձ հարկաւոր է։ Վաղուց մի լաւ կին ուզում է, նա մեր գերմանացու հետ արդէն երկրորդ տարին է, ինչ որ ապրում է։ Դուք, ասում է, իմ բարերարուհին էք. ահա թէ ինչպէս։ Զէ, «ճշմարիտ աշխատանք»... Քո «ճշմարիտ աշխատանքը» ոչինչ չարժէ... Եւ միթէ սա անպատուութի՞ւն է։ Ես ինքս սիրականի հետ եմ ապրում, ուրեմն սա անանպատուութի՞ւն է։

— Ա՛խ, մի տանջէք ինձ, ես ձեզ կվճարեմ...

Աղջիկը կրկին սկսեց հաղել։ Այդ միջոցին նա զսպում էր դառն հեկեկանքը։

— Միթէ ես ձեզ տանջում եմ։ Ահա ձեզ իմ վերջին խօսքը. եթէ չորեքշաբթի օրը փող չտաք, այնուհետև աշխարհի ջրս կողմը բաց է ձեզ համար։ Գնացէք, դէ, ձեր աշխատանքով ապրեցէք։ Ձեզ նմաններն ինձ հարկաւոր չեն։ Մենք անպատիւ ենք...

Տանտիրուհին ասաց ու հպարտի քայլերով դուրս եկաւ սենեակից։

Աղջիկը նորից թեքուեց մահճակալին։ Նա վրդովուած հեկեկում էր և վերմակի ծայրերը զլորելով, ձեռները զարկում իրար։

— Տէր Աստուած, ի՞նչպիսի մարդիկ կան, ա՛խ, ի՞նչպէս դուրս գամ այստեղից, այս հոտած տղմից։

Նորից դուռը բացուեց։

Առաջուայ կինը մտաւ սենեակ։

— Նաստիա, ա՛յ Նաստիա։

— Ի՞նչ ես ուզում։

— Տես ի՞նչ եմ ասում։ անկիւնի սենեակի աղան հրամայեց քեզ բարևել, Աստուած է վկայ։

— Գնա՛, գնա, կորի՛ր։

— Ինչո՞ւ, դեռ մի լսի՛ր. ասում է՝ իւր համար ոչինչ չեմ խնայիլ, ոչ թէ մենակ փող, այլ... չգիտեմ, ասում է ինձ շատ շատ հաղարներ ունեմ։ Էլի ասում է ինձ շատ աղջիկներ են սիրել, բայց այդպիսին չեմ պատահել, դորա համար էլ այրւում եմ։ Այսպէս, անպիտանն ասում է այրւում եմ.. չ՞մմ... ի՞նչպէս է այս քեզ երևում։ Դեռ տեսնենք այդ կապը կարածի հետ էլ ի՞նչպէս կվերջացնես։

Վերջին խօսքն ասելուց, խոհարարուհին թեքեց դէպի այն կողմը, ուր գնացել էր տան տիրուհին։

— Գնա՛, թող ինձ։

— Ի՞նչ գնալ։ Ահա այսպէս մերոնք միշտ յիմար են։ Ախր պէտք է նրանց սովորացնել։ Դու լսիր, Նաստիա՛, թէ

ի՞նչ եմ ասում քեզ. նա մի թխահեր տղամարդ է, գեղեցի՛կ։ Մի ձեռով հինգ պուդանոց է բարձրացնում։ Տղամարդ է իսկական։ Խմում է, բայց ոչ շատ։ Է՛նպէս, +էջը լաւացնելու համար, այն էլ ուշ օրերին։ Նա երբեմն հարբում էլ է, բայց քօռանայ այս իմ աչքը թէ մի անկարգութիւն լինի տեսած նրանից։ Էնպէս է, ինչպէս որ անում է այստեղի ապրող աստիճանաւորը։ Ինչպէս Աստուծոյ առաջ, ես քեզ մաքուր ճշմարտութիւն եմ ասում։ խեղճը միշտ կրկնում է. փող չեմ խնայիլ, շա՜տ, շատ հաղարներ ունեմ և էլի միշտ ասում է. «այրւում եմ»։

— Տէ՛ր Աստուած, շուտ կվերջանա՞յ այս բոլորը։ Աղջիկը նորից հեկեկաց. — Դէ՛, գնացէ՛ք, գնացէ՛ք այստեղից։

— Ի՞նչ ես զոռզոռում։ ես առանց քո զոռոցի էլ կը գնամ։ Ինձ համար միևնոյն չէ՞, թեկուզ քաղցից էլ մեռնես։ Քո մէջ մի մաղի չափ ազնուութիւն էլ չկայ... Էսքան լաւութեանս փոխարէն մի քաղցր խօսք էլ չունես։

Եւ նա դուրս եկաւ, դռան փեղկը ամուր զարկելով պատին։

II.

Մեծ սենեակ է, սևացած, ամբողջովին ծածկուած փոշով ու մրուրով։ Պատերի մօտ և մէջտեղը դրաշարների համար դրած են դարակներ։ Փոքրիկ, ձեռի լամպարները լուսաւորում են չլուացուած երեսներ և տառակալը բռնած ձեռներ։ Ամենուրեք լսւում է հանդարտ խօսակցութիւն և մի խուլ աղմուկ։

—«Եւ երկրորդ... ո-բով-հե-աև... շրջա-բե-բա-կան... բան-կե-բի... զար-դաց-ման... ար-գելք են... դր-ւում...» տողերով կարդում է մռայլոտ և միայնակութիւն սիրող դրաշարը, պատրաստուելով գործի կենալու։

— Գրում ե՞ն, է՞, անպիտաններ... բարկացած հայհո-

յում է նա, ձեռնարկելով ձեռագրին.—Կարծես հաւ է իւր չանչիկներով մրոտել թուղթը: Տեսնես, ո՞ր անասունն է գրել: Գրող է կամենում հռչակուել, ցանցառ գլուխ...

Մի կողմում աշխատում էին երեք աղջիկներ ամբողջովին հագնուած սևերով: Նրանցից մէկը ծանօթ է մեզ՝ զրքոյկիս նախկին դլխից: Նա դեռ լեռվին ուշքի չէր եկել: Նոյն թախծալի հայեացքը, ինչպէս և առաջ, երևում էր նրա աչքերում: Միևնոյն տենդոտ կարմրութիւնը երբեմն վառւում էին այտերին: Նա պարապում էր մեծ արագութեամբ, ձիգ էր թափում կորցրած միջոցներն էլ լրացնել:

Միւս երկու դրաշարուհիներն էլ նոյնպէս տանջուած էին ծանր աշխատանքի և զրկանքների տակ: Նրանցից մէկի աչքը սկսել է բորբոքուել և նա երբեմն արորում էր կարմրած, ուռած կոպերը, կարծես կամենալով տեղափոխել տանջող ցաւը:

—«Կարող եմ քեզ սիրել, եթէ դու Մեկլինբուրգի չարագործ և անզգամ թագաւորին կարողանաս յաղթել և ինձ ազատել: Այն ժամանակ՝ դու, քա՛ջ երիտասարդ, Ադոլֆ Նիկոլայևիչ, քո նշանաւոր ձիով այս բարձր պատերի վրայով թռիր և հանդչիր իմ կրծքին: Այդ ես լաւ կարող եմ, պատասխանեց իշխանաղն երիտասարդը և նոյն րոպէին...» այսպէս ջոկում էր գրուածքը մի այլ դրաշար, զուր աշխատելով գրուածքի բուն իմաստն ըմբռնել:

— Նաստասիա Իւանովնա, օրիորդ Նաստասիա՝ կանչում էր շէմքում կանգնած մի հաստ պարոն, սեաղոյն գեղեցիկ կարուած հագուստում: Նորա կրծքին փայլում էր ոսկէ ժամացոյցի շղթան, իսկ մատին՝ ադամանդ մատանի:

Մեր ծանօթ դրաշարուհին ընդհատեց գործը, գնաց, մտաւ առանձնասենեակը, որտեղ սրբագրութիւնների կոյտերի մօտ նստած էր տպրանատէրը:

— Ի՞նչ էք կամենում: հարցրեց աղջիկը:

— Մ՛խ, դուք էք, շատ ուրախ եմ: ասաց շքեղ հագնուած պարոնը, զննելով աղջկան. շատ ուրախ եմ: խնդրեմ ստացէք

տասներկու ռուբլի: Մնացեալ ութը ես հանեցի բաց թողած օրերի հաշուին:

— Ես հիւանդ էի...

— Գիտեմ, գիտեմ: Ես արդէն ամեն ինչ նախատեսել էի: Գիտէ՞ք, կանոնաւոր դրութեան մէջ մտած որևէ գործ չէ կարող առաջ գնալ, եթէ աշխատաւորները ձեզ պէս վարուեն: Եթէ դուք հիւանդ էք, այդ իմ գործը չէ, ձերն է: Ես այսքանը գիտեմ, որ դուք ութ օր չէք գործել և այդ պատճառով ցաւ ի սիրտ հարկադրուած եմ ձեզ աւելորդ տեղից ութ ռուբլի չտալ: Եւ ներեցէք, որ ձեր փոխարէն, իմ տպարանի համար աւելի յարմար դրաշար եմ գտել. ներեցէ՞ք:

— Ես բաց թողած օրերի փոխարէն կաշխատեմ տօներին. ինչո՞ւ էք ինձ հեռացնում և զրկում մի կտոր հացից:

— Ես տպարան ունիմ և ոչ անկելանոց. երկրորդ ձեր հիւանդութիւնն էլ անբուժելի է, ուրեմն դուք ինձ համար չէք կարող օգտակար լինել: Գնացէք բարով, ահա ձեր փողերը:

Աղջիկն օրօրուելով դուրս եկաւ տպարանից:

Նորա գլուխն այրւում էր, աչքերից թափւում էին տաք արցունքները:

—Բոլորը, բոլորը դարձեալ կորած են: Դարձեալ առանց աշխատանքի, առանց միջոցի, առանց հացի: Ի՞նչ անեմ ես այս տառապանքների հետ:

Այդ տարտամ բոպէին նա մինչև անգամ չկարողացաւ հանգիստ լաց լինել և գնաց, ինքն էլ չիմանալով դէպի ո՞ւր:

— Աստուա՛ծ... Միանգամից վերջ դնել այս կեանքին... Գոնէ դորա համար էլ ոյժ ունենայի: Բայց ո՞րքան աշխատեցի, ո՞րքան պատրաստուեցի և այդ բոլորն ապարդիւն կորան: Ո՞ւր գնալ, ո՞ւր ապաստանել: Ա՛խ, իմ խե՛ղճ մայր, իմ թշուառ մայր, եթէ այս բոպէին դու տեսնէիր...

Եւ թուլացած նա յենուեց լապտերի սեանը, չնկատելով, որ սրիկաներից մէկը հետևում է իրան:

Յոգնե՞լ էք, թոյլ տուէք ձեզ օգնել. լսուեց նորա ետեւից, մենք մի ճանապարհի ենք:

Աղջիկը յետ նայեց։ Լապտերի լոյսն ընկել էր մի արբած, անձռնի դէմքով մարդու վերայ։ Սրիկան մեկնել էր իւր ձեռը։

Աղջիկն իսկոյն հեռացաւ։

— Ես կառք կվարձեմ։ դուռաց արբածը, բայց աղջիկը հեռացել էր, ոչինչ չէր լսում։

III

Կեղտոտ խոհանոց է։ Օդը խեղդուած ու գարշահոտած։ Ռուսական մեծածաւալ վառարանի մօտ անդադար շարժւում էր մեզ վաղածանօթ խոհարարուհին։ Սեղանների երեսներին նկատւում էին արեան հետքեր և կանաչեղէնների ճեացորդներ։ Խոհանոցի մի անկիւնը առանձնացրած էր պատառոտած վարագոյրներով։ Նորանց տակից երևում էր մահճակալի ծայրը, որի վերայ մէկը երբեմն շարժւում էր։

Այդտեղից լսւում էր չոր, ուժգին հազ, որ ընդհատւում էր շատ խոր հառաչանքով։

Կիսաբաց դռնից ներս էր թափւում պաղ օդը, վարագոյրը ծածանում էր և նորա տակ երևում էր հիւծուած ու դժգունած մի դէմք, խոշոր, մթագոյն աչքերով։ Իսկ մաշուած ձեռներն ուժասպառ ընկած էին կեղտոտ վերմակի վերայ։

— Նաստիա, այ Նաստիա. կանչում էր խոհարարուհին։

— Ի՞նչ է, լսուեց վարագոյրի տակից։

— Գոնէ մի բան կուտէիր։

— Ոչինչ չեմ ուզում։

— Այսօր՝ այստեղի բնակչուհուց ինչ որ բան է ճեացել։

— Չեմ ուզում։

— Ի՞նչպէս թէ չեմ ուզում. կե՛ր, որ առողջանաս, է՞։

— Ա՛խ, հեռացի՛ր, ի սէր Աստուծոյ։

— Ինչո՞ւ հեռանալ. քեզ համար եմ ասում։ Հեռանալ, միթէ ես քո բարեկամը չե՞մ. հմմ... Ուրիշ խոհարարուհին

քեզ մենակ թէյով կկերակրէր։ Իսկ ես քեզ համար ամեն կերպ մտածում եմ հոգով և սրտով, բայց դու փոփոխում ես։ Ինքդ էլ չես հասկանում թէ՝ ինչ ես ասում։ Կամենամ այս բոպէիս քեզ փողոցը կձգեմ, շէմքումը կսատկես։ Կարող եմ այդպէս անել, չէ՞... Կարո՞ղ եմ, թէ չէ։ Եւ ես դեռ սորա համար լաւ մարդ էլ ճարեցի, ամեն գործում օգնութիւն ցոյց տուի։

Վարագոյրի ետևից լսուեց տխուր հեկեկանք։

— Է՜, դէ՛, լաւ. էլ մի՛ կծուիր։ Նաստիա, այ Նաստիա, թող, լա՜ւ, ես բան չեմ ասում. ես բարի կին եմ, Աստուած է վկայ ես բարի կին եմ։ Դու ասածներս էլ շատ լուրջ մի ընդունիր. էնպէս, է՞, ուզեցի հանաք անել։ Միթէ ես քեզ կհեռացնե՞մ։ Չէ՛, չէ՛, այդ անկարելի է։ Ինձ վերայ խաչ ունիմ, թէպէտ փայտէ խաչ, բայց էլի խաչ է։ Լա՛ւ, լաց մի՛ լինիլ։ Աստուած տայ շուտով կառողջանաս։

Խոհանոցի շէմքում երևաց բարձր հասակով, վառվռուն դէմքով, թխահեր մի տղամարդ, ըստ երևոյթին զինուորական խմորից, — դէմքը խոշոր գծերով, առաջ ընկած կրծքով և յաղթանդամ, կարծես նմուշի համար ձուլուած կռներով։ Նա խոհարարուհուն կանչեց իւր մօտ։

— Ի՞նչ էք ուզում։ հարցրեց սա շշնջալով։

— Հմմ.. ի՞նչպէս է, հարցրեց զինուորականը, աչքի նշանով վարագոյրը ցոյց տալով։

— Հիւանդ է, ոչ մի կերակուր չի ընդունում։ Այժմ արդանակն էլ չի ուտում։

— Չէ, ես այն բանի մասին...

— Չէ, չէ, պէտք է սպասել, նա ոչինչ չի լսում։

— Ցիմա՛ր, ինչ որ ես քեզ ասել եմ, դու նրան բոլորն ասա. այն միջոցները, բաւականութիւնները... բոլորը։

— Ասել եմ, բոլորն ասել եմ։

— Ցեռ՞ոյ։

— «Մաքուր աշխատանքով պիտի ապրեմ» ասում է։

— Մաքուր աշխատանքով. զարմացած ու շուարած կրկնեց

զինուորականը։

— Էլի ասում է, ես կարող եմ աշխատել։

— Աշխատե՞լ այդպէս էլ ասա՞ց. այ թէ ինչ։

— Այո՛։

Սա՜ս... դու էլ նորան ասա. լաւ պարոն է, հայրենիքի թշնամիներն է ոչնչացրել, քո սիրոյ համար վառուած է մի անշէջ կրակով։ Դու այսպէս ասա։

— Այ թէ ինչպէս։ Իսկ մերոնց համար սև քար ես դարձել։ Զարմանքի նշանով գլուխը շարժեց պառաւը։

— Դէ՛, լա՜ւ, սև քար, միայն դու ասա նորան։

— Ինչո՞ւ չասել, ասելը դժուար չէ։

— Լաւ հասկացիր, եթէ աջողես, սկիւռի մուշտակ պիտի ստանաս։

— Եւ հինգ մանէթ, ինչպէս առաջ խոստացել էիր։

— Այո՛, և հինգ մանէթ. միայն թէ լաւ շարժուիր և անուի պէս պտտուիր։

— Ես չեմ մոռանալ, բայց նա դեռ հիւանդ է։

— Ի՞նչ հիւանդ... Այդ վատ ապրուստիցն է։ Երբ նա ամեն բաւականութիւն ստանայ, գնդակ կդառնայ։

— Ինչ է ասում. միթէ այդ մեղ նմանները հասկանո՞ւմ են։ Մեղ նմանները ժիմար են, ուրիշ ոչինչ։ Ախր ո՞ր տեղից նորա համար լաւ մարդ ճարեմ։

IV

Հիւանդանոցի ընդունարանն է։

Պատերի մօտ շարուած փայտէ նստարանների վերայ նստած են տկարները։ Մի պառաւ՝ աղջկան նեցուկ առած, նուաղած աչքերով ջափում է ամբողջ սենեակը, երբեմն էլ հաղում ու արիւն թքում։ Փոքր ինչ հեռու նստած է մի շեկահեր տղայ, խղճալի հայեացքով նա նայում է իւր փաթաթուած կռանը և ըստ երևոյթին սաստիկ ցաւում, տես-

նելով, որ արիւնը ծծել է ամբողջ քաթանը։ Նոյն շարքում նստած է մի կին, ողորմելի հագուստում, կիսով չափ մարած աչքերով և կորացած գլխով։ Նա բռնել է հիւծուած, սպրբանած երեխայի ձեռը։

Բժշկի օգնականը յաճախ դուրս է գալիս ու ցուցակով մէկ-մէկ կանչում հիւանդներին։

— Ամենասուրբ Աստուածածին, ո՞վ սուրբ հայրեր, մոտեցել է իմ վերջին ժամը. հառաչում է մի անկիւնում պառաւը, իւրաքանչիւր անդամ ծանր հաղելուց յետոյ։

— Նաստասիա Իւանովնա, կանչեց բժշկի օգնականը։

Երիտասարդ աղջիկը կանգնեց, և, թուլութիւնից հաղիւ շարժելով, մտաւ միւս սենեակը։

— Ինչի՞ց էք հիւանդ. հարցրեց նրան գերմանացի բժիշկը։

— Կուրծքս ցաւում է, հաղում եմ, արիւն եմ թքում։

— Հա՜... մի առանձին նշանակութեամբ շեշտեց նա, դիտելով աղջկան ոսկէ ակնոցների ետևից։

— Ընդհանուր թուլութիւն ունիմ, չեմ կարողանում աշխատել։

— Ամեն մարդ պարտաւոր է իւր աշխատանքը տանել։ Իսկ դուք ի՞նչպէս կեանք էք վարում։

— Ի՞նչ...

— Դուք ո՞վ էք, ինչո՞վ էք պարապում։

— Ընտանիքում վարժուհի էի, աշխատել եմ և տպարանում, գրաշարուհի եմ եղել։

— Ա՜յդպէս. Վասիլեյ Վասիլիչը կգնէ ձեր կուրծքը։

Վասիլեյ Վասիլիչը մօտեցաւ և սկսեց ծեծել օրիորդի կուրծքն ու ականջ դնել նորա բարախման։

— Բարակացաւ է. սառնասրտութիւնամբ վճռեց նա և հեռացաւ։

— Հմմ... բարակացա՛ւ. ուրեմն հարկաւոր է լաւ ապրուստ, թեթև ուտելիք, արդանակ, հաւ, բրինձ, մաքուր բնակարան ու հանգստութիւն։

— Թոյլ տուէք ինձ հիւանդանոցում պառկել։

— Վասիլեյ Վասիլիչ, չե՞ կարելի։ Դուք պէտք է երկար օդտուէք, շատ դժուար է։ Չի կարելի, ոչ մի կերպ չի կարելի։

— Ես ոչ մի անկիւն չունեմ, ո՞րտեղ տեղաւորուես։

— Դէ, ես ի՞նչ անեմ։ Ուրիշ բան չի կարելի։ Արդանակ, հաւ, բրինձ, մաքուր...

— Ես ո՞րտեղ գնամ, Տէր Աստուած։

— Հմմ...

Երկու բժիշկները անցան մի կողմը, ինչ որ բան շշնջացին, ապա հանեցին փողամանները։

— Ահա՛ ես ձեզ մի քիչ կօգնեմ, ներեցէ՛ք։

Հիւանդ աղջիկը շուարուեց ու մերժեց։

— Հարկաւոր չէ նաղ անելը։ Ես ունիմ, դուք չունիք։ Քրիստոս այդպէս է ասել։ Հիւանդանոցում ոչ մի կերպ չի կարելի։

Եւ բժիշկը դէպի նա մեկնեց երեք ռուբլեանոց թղթադրամը։

. . . . . .

Գրաշարուհին դուրս եկաւ։ Օրը պարզ էր և պայծառ։ Ծառերը նոր էին բացւում։ Բողբոջները կանաչում էին քնքուշիկ տերևներով։ Գիշերը ցուրտ լինելու պատճառով հողը չոր էր և կոշտ։ Թռչուններն ուրախ ճռւողում էին և թռչկոտում մի լորենուց դէպի միւսը։ Ճնճղուկները համարձակ ճախրում էին այս ու այն կողմում։ Նաստասիա Իւանովնան անցաւ դէպի ձեմելիքները։ Հեռւում — ջինջ երկնքի ստուերում նկատւում էին եկեղեցիների գմբէթները, որոնց ոսկեզօծ խաչերը շողշողում էին արևի ճառագայթների տակ։ Մի ինչ որ տեղից հնչում էին դաշնակի ողբալուն ձայները և երգչուհու երգի հետ տարածւում առաւօտեան օդի մէջ։

Այդ պահին չէին լսւում՝ ոչ կառքերի դղրդոցը, ոչ բազմալեզու ամբոխի աղմուկը։

Նաստասիա Իւանովնան նստեց նստարանին և բարձրացրեց գլուխը։ Նորա դիմաց ընկած էր լայն ու երկայն փո-

ղոցը, իսպառ թափուր մարդկանցից։ Ծխախոտի խանութի շէմքում ինչ որ աղայ տրորում էր աչքերը։

— Ո՞ւր գնալ, ի՞նչ անել. Տէր Աստուած. որքան ցամաք, որքան անխիղճ են մարդիկ. ժառանգում էր խեղճ, անօթեւան մնացած աղջիկը։

— Գործ էլ չեն տալիս։ Միթէ ծախե՞լ ինձ։ Ոչ, այդ զզուելի է, զզուելի։

Նա չէր կարողանում մի կէտի վերայ կանգ առնել։ Նորա մտքերը շատ արագաթռիչ և անորոշ էին

— Միակ յոյսս Բախմետևան է։ Նորա հետ մէկտեղ սովորել եմ։ Միթէ նա չի՞ օգնիլ ինձ։

Եւ նորա աչքի առաջ եկան մանկական պայծառ տարիները — բախտաւորութեան և ընկերասիրական տարիները։

— Չէ, ինչպէ՞ս մոռանալ։ Մի՞թէ կմոռացուին այդպիսի քաղցրալից յարաբերութիւնները։

Եւ նա արագութեամբ բարձրացաւ տեղից։

— Ես իսկոյն գնամ նորա մօտ։

Նա շուռ եկաւ իւր տեղից և գնաց։

V

Փոքրիկ ընդունարան է։ Արեգակի ճառագայթները թանձր վարագոյրների արանքով փռուել էին մոխրագոյն մետաքսով ծածկուած կարասիքներին և յատակին փռուած փափուկ գորգերին։ Փոքրիկ, զեղեցիկ սեղանի վերայ ընկած են գրքեր, պատկերներ և այլբօմներ։ Պատերից մէկի մէջ տեղում ծոպաւոր վարագոյրները ծածկում էին դէպի միւս սենեակները տանող մուտքը։ Երկու կամ երեք պատկերներ լրացնում էին այդ համեստ սենեակի վայելչութիւնը։

Փափուկ կահաւորակի վերայ նստած է մի երիտասարդ կին։

Կախ ընկած յօնքերը և տխրալից խոշոր աչքերը արտայայտում էին ծանր տրամութիւն և ողբալից մտքեր: Դեղեցիկ ձուլուած ձեռի անփթութեամբ թերթում էր ինչոր պատկերազարդ գիրք, որն ընկած էր իւր ծնկների վերայ:

—Ի՞նչքան յիմար են այս բոլորը: Նա պատասխանում էր երևի մի մտքի, որ ալեկոծւում էր մատաղ գլխում:

—Խեղտում են, սեղմում և ոչ մի անգամ ազատութիւն չեն տալիս: Աստուած գիտէ թէ՝ այս բոլորը երբ կվերջանան: Այժմ էլ չեն ուզում պարուրանքից արձակել:

Եւ նա բարկացած թողեց գիրքը:

—Մարիա Ֆեոդորովնա, ձեզ մօտ մի աղջիկ է եկել, կամաց ձայնով ասաց աղախինը, ինքը փոքր ինչ երևալով վարագոյրների եռևից:

—Ինչ աղջիկ, ո՞վ է նա, ծանո՞թէ:

—Նաստասիա Իւանովնա Պետրովնա, վարժուհի:

—Նաստասիա Պետրովնա՞, դու չես սխալւո՞ւմ:

—Ոչ:

—Կանչի՛ր, կանչիր շուտով, խնդրիր այստեղ:

Եւ նա յուզուած թեքուեց կահաւորակին:

—Նաստիա, սիրելի. ի՞նչպէս է երևացել նա այստեղ:

Մի բոպէից երկու ընկերուհիները գրկախառնուեցին, մինչև իսկ սիրոյ կարօտով և նոր տեսակցութեան ուրախութեամբ սկսեցին հեկեկալ:

—Ի՞նչ է պատահել քեզ հետ, Նաստիա, ի՞նչպէս դալ կացել ես, դու առողջ չե՞ս, ի՞նչ է պատահել քեզ հետ, այդ ի՞նչպէս ես հագնուած:

Նաստասիան սկսեց խօսել: Դառն դանդատ էր լսւում նորա պարզ, անկեղծ խօսքերի մէջ: Նորա բոլոր զրոյցը նկարագրութիւն էր ջարդուած ու փշրուած կեանքի: Աղքատութիւն, չքաւորութիւն, վերաւորանք, որոնք կրել է դառնագին օրերին և երկար, անքուն գիշերներին, հասկանալի կերպով ներկայացան նորա ընկերուհու աչքի առաջ:

—Ես ի՞նչ անեմ, ա՛խ, ի՞նչ անեմ, ասում էր նա ձեռները իրար սեղմելով, քեզ ի՞նչպէս օգնեմ, իմ խեղճ Նաստիա:

Եւ նա գլուխը թեքելով ընկերուհու ուսին, դառնապէս հեկեկաց:

—Իմ միակ յոյսս դու ես, ես ոչինչ չունիմ, ոչինչ. օգնիր ինձ. աղաչում էր ընկերուհին, սակայն այդպիսով ուժեղացնելով կուրծքը ճնշող ցաւը:

—Ի՞նչպէս օգնել: Պէտք է իմանաս, որ ես այստեղ ապրում եմ ցաւերով լեցը մի անկիւնում: Ինձ այստեղ մինչև այժմ էլ երեխայ են համարում: Մինչև իսկ ծանօթներս էլ նրանց վերաւորիչ հսկողութեան տակ են: Ահա՛, տեսնո՞ւմ ես, իմ սեղհականութիւնը միայն այս է, ինչ որ ինձ վերայ է: Սորա մասին էլ ես հաշիւ պիտի ներկայացնեմ: Ինձ ամուսնացնում են, չհարցնելով իմ համաձայնութիւնը: Այստեղ կատարեալ խելագարի տուն է: Ա՛խ- օրքան ուրախ կլինեմ, եթէ այստեղից ազատուեմ:

Եւ ընկերուհին շատ բան պատմեց իւր տխուր կեանքի մասին:

—Խեղճ իմ Մարիամ, դու էլ անբախտ ես, դու էլ վանդակն ընկած թռչուն ես դարձել: Իսկ ես կարծեցի թէ դու ինձ կօգնէիր: Այժմ ես ի՞նչ անեմ... Թէ...

Եւ նա խօսքն ընդհատեց ու մի խոր երկիւղով նայեց ընկերուհուն:

—Շուտով դու էլ երես կդարձնես ինձանից: Մի քանի օրից դու էլ ինձ անմաքուր կանուանես. բայց չմոռանաս, որ նախ քան այդ ճանապարհն ընկնելը, ես շատ տանջուեցի, շատ քարշ եկայ:

Նաստիան այս ասելով իսկոյն դուրս նետուեց:

—Նաստիա՛, սպասի՛ր. կանչեց Նորա ետևից ընկերուհին և թուլացած ընկաւ ու ջերմ արտասուեց:

—Թող ամեն ինչ խորտակուի... շշնջաց գրաշարուհին, փողոցը մտնելով:

—Իմ գրքե՛ր, իմ մտքեր. ո՞րտեղ էք դուք, ո՞ւր են այդ բոլորը: Անագորոյն կեանքս առ ոչինչ արաւ մանկական ցնորք-

ներս։ Երազի նման չքացան աշխատալի, աղաս օրերս։ Ինչու համար և ում համար պահեմ ինձ։ Խորտակուեցի ես և այդ ոչ մէկի համար նշանակութիւն չունի։ Եւ դեռ մարդիկ եղբարք են....

— Ողորմութիւն արէք, ի սէր Աստուծոյ։ Մի անկիւնից Նաստիան լսեց տխրամած ձայն և տեսաւ դէպ իրան մեկնած մի գօսացած ձեռք։ Աղջիկս քաղցած է, շարունակեց աղքատը. ես էլ ոչինչ չեմ կերել, օգնեցէ՛ք, օրիո՛րդ։

Աղջիկը կանգ առաւ։ Ինչ որ միտք ծփաց նորա գլխում։

— Թող ոչինչ չմնայ ինձ մօտ մաքուր կեանքից, ոչ մի յիշողութիւն։

Եւ նա մեքենայաբար գրպանից հանեց բժշկի տուած երեք ռուբլեանոցը և դրեց աղքատ պառաւի ձեռին։

— Թող կորչի բոլորը։

Քիչ ժամանակից յետոյ նորա դիակը գտնուեց «Մոսկուա» գետի պղտոր ալեքների մէջ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0317901

12.316